ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

N 62-Ա

<< 25 >> <<մայիս>> 2021 թ
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի ապրիլի 10-ի N1189-Ա հրամանի հավելված 3-ի 46-րդ կետը՝ հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի փորձագիտական լիարժեք հետազոտությունը կազմակերպելու և իրականացնելու նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սույն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բուժհաստատություններում հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի փորձագիտական լիարժեք հետազոտության կազմակերպման և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ.Ասլանյանին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ.Ասլանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5/25/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. մայիսի 25-ի թիվ 62-Ա որոշման

Աշխատանքային խմբի անհատական կազմ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Լիլիա Կարապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ:

Անդամներ՝

Սարինե Պողոսյան - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի մանկաբույժ, իմունականխարգելման գործընթացի պատասխանատու,

Բյուրեղ Ծերունյան- <<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի էպիդեմիոլոգ,

Էմմա Հանիսյան- <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի մանկաբույժ, վարակաբան,

Աստղիկ Շահրամանյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տեղամասային թերապևտ,

Արեգա Բաղդասարյան- <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տեղամասային թերապևտ: